

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՌՈՒՄ

(1973 թ. հունվար — դեկտեմբեր)

ԲՈՒՂԱՐԻԱ

Փետրվարի 1-ին Սոֆիայում տեղի է ունեցել գրական երեկո՝ նվիրված Պ. Յավորովի և Սիամանթոյի ծննդյան 95-ամյակին։ Յավորովի կյանքի ու գործունեության մասին զեկուցում է կարդացել «Երևան» թերթի գլխավոր խմբագրի տեղակալ Հ. Օրմանճյանը, իսկ Սիամանթոյի մասին՝ նույն թերթի խմբագիր Կարո Հայրապետյանը։

«Երևան», 9 փետրվարի

* * *

Մայիսի 16-ին Սոֆիայի «Երևան» ակումբի սրահում նշվել է Սարգսյանի հերոսամարտի 55-րդ տարեդարձը։ Համապատասխան զեկուցումով հանդես է եկել «Երևան» թերթի գլխավոր խմբագիր Բենիամին Թյուֆենճյանը։

Վերջում ցուցադրվել են «Հայաստանի գույները» և «Հայաստան» հայկական փաստա-վավերագրական ֆիլմերը։

Սարգսյանի հերոսամարտին նվիրված նիստեր են տեղի ունեցել նաև Սիմվենում, Պլովդիվում, Սիլիստրայում և Բուրգասում։

«Երևան», 1, 15 հունիսի

* * *

«Երևան» ընկերության Վառնայի վարչությունը Հայրենական ճակատի և բուլղար-սովետական բարեկամության բաղադրյալ կոմիտեների հետ միասին նոյեմբերի 22-ին մեծ շուրջով տոնել է Հոկտեմբերյան մեծ հեղափոխության 56-րդ և Սովետական Հայաստանի 53-րդ տարեդարձերը։ Հանդիսավոր երեկոյի վերջում տրվել է համերգ։ Նույնանման տոնակատարություն տեղի է ունեցել նաև Սիմվենում։

«Երևան», 20 նոյեմբերի, 7 դեկտեմբերի

ՉԵՆՈՍԼՈՎԱԿԻԱ

Պրագայում հրատարակվող «Սոցիալիզմի աշխարհ» երկշաբաթյա հանդեսում հրապարակված է լրագրողուհիներ Մարի Բուլեշովայի և Լանկա Սպիցերովայի 24 էջից բաղկացած ակնարկաշարը՝ նվիրված Սովետական Հայաստանին։

«Ջան Երևան» վերնագիրն ունի Երևանին

նվիրված ակնարկը, որում խոսվում է մայրաքաղաքի, երևանյան նորակառույցների, ժամանակակից ճարտարապետական կոթողների, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների, ցայտադրությունների, դրոսայիների մասին։

«Խմաստության ծառի տերևները» վերնագրով բաժինը նվիրված է հայ գրքին։ Այստեղ պատմվում է Մատենադարանի ձեռագրերի և Հայաստանի գրադարանների մասին։

«Բարե ձեզ» ակնարկը նվիրված է հայրենադարձությանը։

Ակնարկաշարը ուղեկցվում է լուսանկարներով, որ կատարել են Միրկո Սինդելարեն, Լադիսլավ Կրեչիկ և ուրիշներ։

«Հայրենիքի ձայն», 25 ապրիլի

* * *

Չեխոսլովակիայի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի աշխատակցուհի Լյուդմիլա Մոտալովան թարգմանել, կազմել և պատրաստել է երկու ժողովածու, որոնցից առաջինը կրում է «Կանաչ, կարմիր, սպիտակ խնձոր» վերնագիրը և բովանդակում է հայկական ժողովրդական հեքիաթներ, իսկ երկրորդը՝ «Հիմն լույսին»՝ Պարույր Սևակի մի շարք բանաստեղծությունները։

Հեքիաթների ժողովածուն ընդգրկում է 22 հեքիաթ, նկարագրողումները կատարել է Յուլիա Սվոբոդան։

Երկրորդ ժողովածուն կազմված է Պ. Սևակի «Երկրի լույս» և «Մարդը ափի մեջ» ժողովածուների հիման վրա. նկարագրողել է դարձյալ Յուլիա Սվոբոդան։

«Հայրենիքի ձայն», 1 մայիսի

«Ջահակիր», 3 մայիսի

* * *

Պրագայի «Սլոնատրոս» ցուցասրահում բացվել է «Սովետական Հայաստանի մանկական նկարներն ու դրքերը» ցուցահանդեսը։

«Նոր կյանք», 7 դեկտեմբերի

ՀՈՒՆԴԱՐԻԱ

Հունգարիայի «Եվրոպա» հրատարակչությունը տպագրության է պատրաստել «Հայ գրականության ծաղկաքաղը» վերնագրով մի հատոր, որ լույս պետք է տեսնի 1975-ին: Միաժամանակ Հայաստանի և Հունգարիայի մասնագետները պետք է պատրաստեն և լույս ընծայեն հայկական մանրանկարչությանը և միջնադարյան հայ կերպարվեստին նվիրված ալբոմներ:

«Նոր կյանք», 7 դեկտեմբերի

Գ Դ Հ

Բեռլինում հրատարակվող «Die Weltbühne» շաբաթաթերթի 1973 թ. հունվարի 23-ի համարում դոկտոր-պրոֆեսոր Պ. Բրեյնտյեսը հրատարակել է հոդված, որ խոսվում է 1915—1916 թթ. հայկական կոտորածների մասին:

Հոդվածում հիշատակված է Լեփսիուսի և Կարլ Լիբկնեխտի ելույթների մասին ի պաշտպանություն հայ ժողովրդի:

«Ջահակիր», 26 ապրիլի

ՌՈՒՄԻՆԻԱ

Ռումինիայի «Գրադարան ամենուն համար» հրատարակչությունը, որ հիմնվել է 1895-ին, լույս է ընծայում հատորներ ումինական և օտար դասական և ժամանակակից դրականությունից:

Այդ հրատարակչության 639-րդ հատորը նվիրված է հայ ժողովրդական էպոսին և ունի «Սասունի քաջերը» խորագիրը: Թարգմանությունը կատարել է Նիկոլայե Թեյքը, նկարները՝ Անկա Վասիլեսկուն, գրքի հեղինակն է Վիկտոր Քերնբախը:

«Նոր կյանք», 19 հոկտեմբերի

ԼԻԲԱՆԱՆ

Բեյրութում դեկտեմբերի 19-ին տեղի է ունեցել Ներսես Շնորհալու 800-ամյակին նվիրված երեկո Բեյրութի հայագիտական ուսման կենտրոնների նախաձեռնությամբ: Ներսես Շնորհալու մասին զեկուցումներ են կարդացել Ա. Կոստյանը, Մ. Ծինպաշյանը, Ա. Քեչիշյանը և Վահան Վահանյանը:

«Զարթոնք», 11 հունվարի 1974

* * *

Բեյրութում, հունիսի 4-ին «Հայ համալսարանավարտներու միության» նախաձեռնությամբ բացվել է հայկական ճարտարապետության ցուցահանդես: 160 ցուցատախտակների վրա ներկայացված են Սովետական Հայաստանի և Արևմտյան Հայաստանի 60 ճարտարապետական կոթողներ, դրանցից յուրաքանչյուրի լուսանկար-

ները և հատակագծերը: Ցուցահանդեսի կազմակերպիչներն են պրոֆ. Ալպագո Նովելլոն և դոկտ. Վահրամյանը: Բացմանը հրավիրված են եղել զանազան երկրների դիվանագիտական ներկայացուցիչներ՝ Բեյրութում իտալական դեսպանի զխավորությամբ, մինիստրներ, արվեստագետներ, լրագրողներ, հասարակական գործիչներ և արվեստասեր բազմություն:

«Զարթոնք», 5 հունիսի

ԹՈՒՐԳԻԱ

«Արև» թերթը հայտնում է, որ Թուրքիայի անցյալում հայաբնակ քաղաքներում շատ քիչ թվով հայեր են մնացել, որոնք ոչ դպրոց ունեն, ոչ եկեղեցի: Միայն Կեսարիայում և Տիգրանակերտում (այժմ՝ Գայսերի և Դիարբեքիր) մեկական հայ քահանաներ կան, որոնք բոլորն էլ աղքատության մեջ են: Քիչ թե շատ ունեղները տեղափոխվում են Ստամբուլ, որտեղ զաղթականների տեղավորման համար պատրիարքարանին կից կազմված են հանձնախմբեր: Անկարայում ապրող հայերը ևս ոչ եկեղեցի ունեն, և ոչ էլ դպրոց:

Վերջերս Թուրքիայի զավառները այցելած լիբանանահայերից Անդրանիկ Գալաթյանը ներկայացրել է տեղեկագիր, որ բերվում են հետևյալ տվյալները.

Իսկենտերունի մեջ ապրում են տասնհինգ հայ ընտանիքներ, կա հայկական եկեղեցի, բայց քահանա չունեն: Տարսնում երկու հայ ընտանիք կա, Մերսինում՝ յոթ, Խարբեքում՝ 15, Կեսարիայում, երբեմնի հայաշատ այդ քաղաքում, մնացել են հազիվ 30 հայ ընտանիքներ: Անկարայում 500 հայ ընտանիք է բնակվում, Պողազլարում՝ երկու:

«Պր. Գալաթյանի տված վերոհիշյալ մանրամասնությունները, — գրում է «Արևը», — հավանաբար ճշգրտագույն տեղեկությունները չեն: Վստահաբար իր այցելած քաղաքներում մեջ հայոց թիվը ավելի շատ է, քան ինչ որ ինքը կհիշե, սակայն անոնք վախճած են իբր հայ ներկայանալ իրեն»:

«Արև», 7 հոկտեմբերի, 1972

ՖՐԱՆՍԻԱ

Փարիզի հայաշատ արվարձաններից մեկում՝ Ալֆորվիլում. կառուցվել է հայկական մի սրահ, որի բացումը կատարել է քաղաքապետ Ժոզեֆ Ֆրանչեսկին:

Հայերը ուր էլ հաստատվել են, — ասել է նա իր բացման խոսքում, — հիմնել են դպրոց, մշակութային օջախներ, թերթեր և իրենց աղենիվ նվիրումով ու աշխատանքով պահել իրենց կենսունակությունը: Հարուստ է հայ մշակույթը,

հայ ճարտարապետությունն իր ազդեցությունն է թողել զոթական ճարտարապետության վրա, հայ երգը, կոմիտասյան երգը հմայիչ է, հայ մանրանկարչությունը՝ գեղեցիկ: Հայ ժողովրդի ստեղծած մշակութային այս արժեքները ներդրում են համաշխարհային մշակույթի գանձարանը: Ժամանակն է, որ մենք էլ մի բանով օգնենք Ալֆրեդիի հայերին, և ահա կառուցեցինք հայկական այս հիմնարկությունը, որպեսզի նրանք այսուհետև ավելի լավ կարողանան կազմակերպել իրենց մշակութային կյանքը:

Հայկական սրահում կազմակերպված առաջին միջոցառումը եղել է «Հայոց պատմությունը հայկական դրամներով ներկայացված» ցուցահանդեսը, որտեղ ներկայացվել են նաև հայկական հնատիպ գրքեր:

«Հայրենիքի ձայն», 28 մարտի

* * *

«Էն ղ'էդիտոր ֆրանսե Ռեյունի» հրատարակությունը լույս է ընծայել հայկական պոեզիայի անթոլոգիա (ֆրանսերեն): 600 էջանոց այս ստվար հավաքածուում ամփոփված են հայ պոեզիայի բոլոր աչքի ընկնող նմուշները՝ Գողթան երգերից մինչև ժամանակակից բանաստեղծների գործերը: Թարգմանությունները կատարել են այնպիսի նշանավոր բանաստեղծներ ու թարգմանիչներ, ինչպիսիք են՝ Ֆրեդերիկ Ֆելյոն, Պիեռ Գամառան, Պիեռ Սեկերսը, Ժան Ֆայը, Մարկ Դըլուզը, Վահե Գոգելը, Շառլ Դոբրինսկին, Ժերար Հեքիմյանը և ուրիշներ: Ժողովածուն խմբագրել և նախաբան է գրել Ռուբեն Մելիքը: Իրքի վերջում տպագրված է Արտավազդ Իերրերյանի՝ հայ ժողովրդի բաղաբարկրության հանգամանալից ժամանակագրությունը 140 էջով:

«Աշխարհ», 27 հոկտեմբերի

ԲԵԼՂԻԱ

Բելգիայում լույս տեսնող «Le journal des oet es» հանդեսը այս տարվա երկրորդ համարում ընդարձակ բաժին է տրամադրել սովետահայ երիտասարդ բանաստեղծներին՝ «Ընդ բանաստեղծ Սովետական Հայաստանից» խորագրով: Ներկայացված գործերը ֆրանսերենի է թարգմանել և առաջաբան գրել Վահե Գոգելը:

«Արարատ», 1 դեկտեմբերի
«Նոր կյանք», 14 դեկտեմբերի

ԱՆԳԼԻԱ

Օքսֆորդի համալսարանը հրատարակել է «Հայկական հեքիաթներ և առակներ» («Armenian Folktales and Fables») խորագրով հատոր Չարլզ Դաունինգի թարգմանությամբ (230 էջ): Հատորում ղեկավարված է Դաունինգի առաջաբանը, որով նա անդլիացիներին ծանոթացնում է

հայ ժողովրդի պատմությանը: Թարգմանության համար Չ. Դաունինգը օգտագործել է բաղամթիվ հրատարակություններ, որոնցից զլխավորն է բաղամհատոր «Հայ ժողովրդական հեքիաթները» (Երևան, 1959—1967): Հատորի նկարիչն է Ուիլիամ Փափասը:

«Պայքար», 29 ապրիլի

ԱՎՍՏՐԻԱ

Վիեննայում 1971 թ. սկսած լույս է տեսնում «Արարատ» ուսանողական հանդեսը (խմբատիպ), որը հայոց պատմությունն ու մշակույթը ներկայացնում է գերմանացի ընթերցողներին: Հանդեսի խմբագիրն է Սիմոն Պապիկյանը:

«Նոր կյանք», 2 մարտի

* * *

Ապրիլի 29-ին Վիեննայի փողոցներից մեկը կոչվել է «24 ապրիլ—1915»՝ նվիրված հայկական ցեղասպանության զոհերին: Փողոցի բացումը տեղի է ունեցել հանդիսավոր պայմաններում: Ծառեր են արտասանել՝ Պ. Լուսարյանը, բաղաբարկտ Լուի Մերմադը, որը մասնավորապես նշել է. «Հայերը հարգանքի և սիրո արժանի ժողովուրդ մըն են, քաջ, աշխատասեր և խելացի»: Վերջում ելույթ է ունեցել Մարսելի հուշարձանի հանձնախմբի փոխ-նախագահ Հելվեճյանը:

«Արև», 23 մայիսի

ԿԻՊՐՈՍ

Նիկոզիայում արդեն մի բանի ամիս է, ինչ սկսել է գործել «Նարեկ» հայկական նոր նախակրթարանը, որտեղ սկսել են ուսանել 230 աշակերտներ:

«Նոր կյանք», 2 մարտի

ԱՄՆ

Ամերիկահայ ինժեներ Բյուզանդ Զրոյանը, որը մի բանի անգամ որպես գրոսաշրջիկ եղել է Հայաստանում, պատրաստել է վավերագրական գունավոր մի կինոնկար, որը կոչվում է «Հայկական վերածնունդ»: Կինոնկարը ցուցադրվել է ԱՄՆ-ի մի շարք բաղաբներում և արժանացել թե՛ հայ և թե՛ օտարազգի դիտողների հավանությանը:

«Հայրենիքի ձայն», 1 մայիսի

* * *

Ուոլթերը Արթ Գալրիում տպագրության է հանձնվել հայկական մանրանկարների հավաքածուն: Քանակով ոչ մեծ այս հավաքածուում լերված են մեծ արժեք ներկայացնող գործեր: Այդ մանրանկարները վերցված են Ուոլթերը

Արթի Գալըրիում գտնվող X—XVII դդ. 11 ձեռագրերից, որոնց թվում են Ամերիկայում գրտնըվող ամենահին ձեռագրերից մեկը՝ 966 թ. գրված «Թարգմանչաց Սևտարանը», Կիլիկյան մանրանկարչության գործերից մի ձեռագիր՝ կազմված 1195 թ. որում կան ժամանակակցի վկայություններ Սալահեդդինի կողմից Երուսաղեմի գրավման մասին և ականատեսի վկայություններ՝ իսլամիկ Ֆրիդրիխ Իսթրաբուսայի մասին։ Ներկայացված է նաև Թուրոս Ռոսլինի ստորագրած յոթ ձեռագրերից մեկը, որը միակն է Արևմուտքում։ Հավաքածուի մեջ է նաև հիզանի դպրոցի գրչագրություններից մի գլուխ-գործոց՝ գրված 1455 թ.։

Դրքի նախաբանը և գիտական ուսումնասիրությունները կատարել է պրոֆեսոր Սիրարփի Տեր-Ներսեսյանը։

«Արև», 28 մայիսի

* * *

Նյու-Յորքում լույս է տեսել Սթենլի Քրոփ Եսարաչի առյուծները՝ 300 էջանոց գիրքը անգլերեն լեզվով, որ նվիրված է Մարաշի 1915—1922 թթ. պատմությանը։ Գրքի հեղինակն իր հուշերն է պատմում Կիլիկիայի 1918—1922 թթ. դեպքերի մասին։ Ինչպես տեղեկանում ենք «Զարթոնքից», հատորում տրված է հայկական կոտորածների մանրամասն նկարագրությունը։

Հեղինակը օգտագործել է նաև բազմաթիվ օտար և հայ աղբյուրներ։

«Զարթոնք», 16, 18 դեկտեմբերի

* * *

Մի քանի տարի է, ինչ ամերիկահայ նկարիչ Ռիչարդ (Հրաչ) Թաշճյանը նվիրվել է շնորհակալ գործի՝ պրոպագանդել սովետահայ գեղանկարիչների ստեղծագործությունները ԱՄՆ-ի հայաշատ քաղաքներում։ Այդ նպատակով Թաշճյանը երկու անգամ այցելել է հայրենիք, ծանոթացել նկարիչների հետ, լուսանկարել նրանց ստեղծագործություններից շատերը։

Վերջերս Բոստոնում նրա ջանքերով ստեղծվել է «Ամերիկայի հայ նկարիչների միություն», որի նպատակն է սերտ կապեր ստեղծել հայրենի և ամերիկահայ նկարիչների միջև, սփյուռքահայությանը մատուցել հայրենի երկրի նկարչական արվեստը։

Միության անդրանիկ ձեռնարկումը Բոստոնում կազմակերպված ցուցահանդես-դասախոսությունն էր։ Ցուցասրահում ներկայացվել էին Մարտիրոս Սարյանի, Երվանդ Քոչարի, Գրիգոր Խանջյանի, Մինաս Ավետիսյանի, Հակոբ Հակոբյանի և այլոց գործերի վերատպությունները, իսկ պաստառի վրա ցուցադրվել են գու-

նավոր և սև-սպիտակ լուսապատկերները։ Օրվա բանախոսն է եղել Հրաչ Թաշճյանը։ Վերջինս սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեին ուղղված նամակում գրում է. «Պոսթոնցիները մեծ խանդավառությամբ ընդունեցին «Ամերիկայի հայ նկարիչների միություն» կողմն ձեռնարկված ցուցահանդեսը և դասախոսությունը՝ Հայաստանի արդի նկարիչների մասին։ Հուսով ենք, որ ապագայում այսպիսի ձեռնարկներ հաճախակի տեղի կունենան մեր դադուքին մեջ»։

«Հայրենիքի ձայն», 27 փետրվարի, 1974

ԱՐԳԵՆՏԻՆԱ

Լույս է տեսել արգենտինահայ հրապարակագիր ու համալսարանի դասախոս Ռոզա Մախյանի «Հայկական մշակույթը» իսպաներեն աշխատությունը, որը սեղմ ձևով տալիս է հայ պատմության ուշագրավ էջերը, հայ գրի, գրականության ու ճարտարապետության անցած ուղին հնուց մինչև մեր օրերը։ Այս գիրքը ճանաչում է գտել նաև Արգենտինայի սահմաններից դուրս և բազմիցս արժանացել գրքի համաշխարհային ցուցահանդեսներում ներկայացվելու պատվին։

«Հայրենիքի ձայն», 21 փետրվարի

* * *

Կորդոբա նահանգի մայրաքաղաք Կորդոբայում ապրում են 6000 հայեր։ Կորդոբահայ գաղութում, որն ունի արդեն 65 տարվա պատմություն, կան հայրենակցական միություններ։

«Լրաբեր», 22 սեպտեմբերի

ԲԵՆԶԵՆԱ

1962 թ. Բրազիլիայի Սան Պաուլո քաղաքի համալսարանում գոյություն ունի հայագիտական ամբիոն, որի վարիչն է պրոֆ. Նալի Գուդոյանը։ Ամբիոնը պարբերաբար լույս է ընծայում հայոց լեզվին ու մշակույթին վերաբերող գրքեր։ Վերջերս Բ. Գուդոյանը Սան Պաուլոյի համալսարանի արևելյան լեզուների, փիլիսոփայության և հումանիտար գիտությունների ֆակուլտետների մի շարք դասախոսների համագործակցությամբ լույս է ընծայել «Եղիշե Չարենցը և Հայաստանի նոր պրակտիկությունը» 300 էջից բաղկացած գիրք՝ պորտուգալերեն։ Գրքում տրված է ընդարձակ ծանոթագրություն, ինչպես նաև մատենագիտության ցանկ, որում ընդգրկված են նաև Երևանում Չարենցի մասին լույս տեսած մենագրություններն ու հոդվածները, ինչպես նաև «Հայ գրականության պատմություն» հատորները։

«Արաբատ», 16 օգոստոսի

ՊՈՐՏՈՒԴԱԼԻԱ

Լիսաբոնում հրատարակվող անգլերեն «ՏՀԸ Ռիփորթըր» թերթի մարտի 15-ի համարում թղթակցություն է տպված Լիսաբոնում, Գալուստ Կյուպենկյան հիմնարկության թանգարանում փետրվարի 8-ին բացված հայկական ճարտարապետության ցուցահանդեսի մասին: Ցուցադրվել են 80-ի մոտ լուսանկարներ, որոնք ներկայացրել են VI—XVIII դդ. հայկական ճարտարապետությունը: Ցուցահանդեսը կազմակերպել են իտալո-հայկական մշակութային ընկերությունը, Միլանի պոլիտեխնիկ ինստիտուտի ճարտարապետության բաժինը, Լիսա-

բոնի համալսարանի զրական բաժինը, Պորտուգալիայում իտալական մշակույթի կենտրոնը, Հոմի համալսարանի ճարտարապետության բաժինը և Գալուստ Կյուպենկյան հիմնարկությունը: Դասախոսություններ են կարդացել Ա. Ալպադո-Նովելլոն (Միլան) և Պաոլո Կունենոն (Հոմ): Ցուցահանդեսի ընթացքում հնչել են հայկական շարականներ և Կոմիտասի երաժշտությունը: Լույս է տեսել ցուցահանդեսին նըվիրված պատկերազարդ գիրք:

«Զարթոնք», 27 մարտի

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ